ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԾՁԲ-7/16-1

ք. Երևան 03 -ը օգոստոսի 2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «Տեխնոֆրիզ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կախված վերանորոգող կազմակերպության տեղակայման վայրից մինչև զորամաս ընկած հեռավորությունից վերանորոգման ծառայությունն իրականացնել պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված նորոգման կարգագրի ստանալուց հետո՝ առավելագույնը հնգօրյա ժամկետում:

2.4.5 Պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնել մատուցված ծառայության վերաբերյալ տեղեկանք-հաշվարկի մեկ օրինակ՝ ծանոթացված տվյալ զորամասի հրամանատարության կողմից և վավերացված զորամասի կնիքով՝ առանձին-առանձին նշելով յուրաքանչյուր վերանորոգված սարքավորման անվանումը, գործարանային համարը և կատարված ծառայությունների հաշվարկը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 7000000 (յոթ միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2019թ.:

4.3 Կատարողին վճարվող գումարը որոշվում է հետևյալ բանաձևով՝

Կ.Վ.Գ. = Տ.Ն.Գ. x Ա.Գ. / Ն.Գ. x Կ.Ծ., որից՝

Կ.Վ.Գ. - կատարողին վճարվող գումար.

Տ.Ն.Գ. - առանձին տողի միավորի նախահաշվային գինը.

Ա.Գ. - 14901078.

Ն.Գ. - 19680922.

Կ.Ծ. - կատարված ծառայության ծավալը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՀՈ թիկունքի վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Տեխնոֆրիզ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Դավիթաշեն 2թ., 12/1 տուն
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 220513330021000
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00137423
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Մ. Ղամբարյան	Վ. Հարությունյան

Հավելված N 1
N ԳՀՄՁԲ-7/16-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Գնման ենթակա ծառայությունների անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	լվացքատների շահագործման ծառայություններ /Լվացքատան սարքավորումների վերանորոգում/	Վերանորոգման ծառայության մատուցումը համաձայն տեխնիկական վիճակի ակտի: Ըստ կատարվող անհրաժեշտ վերանորոգման աշխատանքների անվանացանկի, հեռավորությունը հաշվարկվում է վերանորոգող ակզմակերպության տեղակայման վայրից մինչև զորամաս, որտեղ պետք է իրականացվի լվացքատան սարքավորումների վերանորոգումը:

Ծանոթություն՝ տեղադրվող պահեստամասերը պետք է լինեն նոր և չօգտագործված: Մեկ տարվա ընթացքում, կազմակերպությունը պատասխանատու է կատարված վերանորոգման որակի համար: Նշված ժամանակահատվածում վերանորոգվող սարքավորումների անսարքությունների ի հայտ գալու դեպքում, վերանորոգող կազմակերպությունը պարտավոր է անհատույց կարգով վերացնել անսարքությունները: Յուրաքանչյուր կատարված վերանորոգման համար ծառայություն մատուցող կազմակերպությունը պատվիրատուին պետք է ներկայացնի տեղեկանք:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման ենթակա ծառայությունների անվանումը	Չ/մ	Քանակը	Առավելագույն գումարը (ՀՀ դրամ)	Ծառայությունների մատուցումը 2019թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝	
					3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 10.12.2019թ.
1	լվացքատների շահագործման ծառայություններ /Լվացքատան սարքավորումների վերանորոգում/	դրամ	1	7000000	Պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված կարգագրի համաձայն:	

Հ/հ	ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	Չ/մ	Միավորի գինը ըստ հեռավորության (ՀՀ դրամ)					
			մինչև 50 կմ	50-100 կմ	100-200 կմ	200-300 կմ	300-400 կմ	400 կմ-ից ավել
	Զորացնող թմբուկ 25 կգ							
1	Պարույր՝ փոխարինում նորով (спираль)	հատ	12000	12600	13230	13892	14586	15315
2	Ազբոշիֆեր՝ փոխարինում նորով	մ.ք.	3000	3150	3308	3473	3647	3829
3	Ռոլիկ՝ փոխարինում նորով	հատ	5000	5250	5513	5788	6078	6381
4	Հենակի վերանորոգում և ներկում հակակոռոզիոն ներկով	հատ	40000	42000	44100	46305	48620	51051
5	Ջերմակարգավորիչ փոխարինում նորով	հատ	28000	29400	30870	32414	34034	35736
6	Ղեկավարման վահանակ փոխարինում նորով	հատ	50000	52500	55125	57881	60775	63814
7	Ռևերսի փոխարինում նորով	հատ	30000	31500	33075	34729	36465	38288
8	Միջանկյալ շկիֆ՝ փոխարինում նորով	հատ	26000	27300	28665	30098	31603	33183
9	Թմբուկի շկիֆ՝ փոխարինում նորով	հատ	30000	31500	33075	34729	36465	38288
10	Օդափոխիչ շարժիչով՝ 0.6 կՎտ փոխարինում նորով	հատ	22000	23100	24255	25468	26741	28078
11	Օդափոխիչ շարժիչով՝ 0.6 կՎտ վերանորոգում	հատ	15000	15750	16538	17364	18233	19144
12	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 180310 ГОСТ 8882-75 50X110X27 մմ	հատ	7500	7875	8269	8682	9116	9572
13	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 180312 ГОСТ 8882-75 60X130X31 մմ	հատ	12300	12915	13561	14239	14951	15698
14	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 206 ГОСТ 8338-75 30X62X16 մմ	հատ	5400	5670	5954	6251	6564	6892
15	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 180206 ГОСТ 8882-75 30X62X20 մմ	հատ	1500	1575	1654	1736	1823	1914
16	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 7206 ГОСТ 333-79 32X62X16 մմ	հատ	1800	1890	1985	2084	2188	2297
17	Փոկ՝ B-2000 փոխարինում նորով	հատ	3500	3675	3859	4052	4254	4467
18	Փոկ՝ A-1600 փոխարինում նորով	հատ	5300	5565	5843	6135	6442	6764
	Լվացքի մեքենա 25 կգ-ոց							
1	Դուռ կոմպլեկտ՝ փոխարինում նորով	հատ	31500	33075	34729	36465	38288	40203
2	Դռան ռետին՝ փոխարինում նորով	հատ	10000	10500	11025	11576	12155	12763
3	Ռեվերսի մեխանիզմ՝ փոխարինում նորով	հատ	30000	31500	33075	34729	36465	38288
4	Ջրի հեռացման փական՝ փոխարինում նորով	հատ	23300	24465	25688	26973	28321	29737
5	Միջանկյալ շկիֆ՝ փոխարինում նորով	հատ	25000	26250	27563	28941	30388	31907
6	Դուռ բացող էլ. փականի փոխարինում նորով	հատ	35300	37065	38918	40864	42907	45053
7	Ջրի հեռացման էլ. փականի փոխարինում նորով	հատ	33800	35490	37265	39128	41084	43138

8	Ջրալցման էլ. փականի փոխարինում նորով	հատ	27000	28350	29768	31256	32819	34460
9	Ջրի էլ. տաքացուցիչի 5 կՎտ՝ փոխարինում նորով	հատ	24200	25410	26681	28015	29415	30886
10	Հենակի վերանորոգում և ներկում հակակոռոզիոն ներկով	հատ	40000	42000	44100	46305	48620	51051
11	Հենակի շկիֆ՝ փոխարինում նորով	հատ	31000	32550	34178	35886	37681	39565
12	Սալնիկ՝ փոխարինում նորով	հատ	4400	4620	4851	5094	5348	5616
13	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 180310 ГОСТ 8882-75 50X110X27 մմ	հատ	7500	7875	8269	8682	9116	9572
14	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 180312 ГОСТ 8882-75 60X130X31 մմ	հատ	12300	12915	13561	14239	14951	15698
15	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 206 ГОСТ 8338-75 30X62X16 մմ	հատ	5400	5670	5954	6251	6564	6892
16	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 180206 ГОСТ 8882-75 30X62X20 մմ	հատ	1500	1575	1654	1736	1823	1914
17	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 7206 ГОСТ 333-79 32X62X16 մմ	հատ	1800	1890	1985	2084	2188	2297
18	Փոկ՝ B(Б)-2000 փոխարինում նորով	հատ	3500	3675	3859	4052	4254	4467
19	Ղեկավարման վահանակ փոխարինում նորով	հատ	45500	47775	50164	52672	55306	58071
	Լվացքի մեքենա 50 կգ-ոց							
1	Դուռ կոմպլեկտ՝ փոխարինում նորով	հատ	32000	33600	35280	37044	38896	40841
2	Դռան ռետին՝ փոխարինում նորով	հատ	25000	26250	27563	28941	30388	31907
3	Ռեվերսի մեխանիզմ՝ փոխարինում նորով	հատ	30000	31500	33075	34729	36465	38288
4	Ջրի հեռացման կլապան՝ փոխարինում նորով	հատ	23000	24150	25358	26625	27957	29354
5	Միջանկյալ շկիֆ՝ փոխարինում նորով	հատ	39000	40950	42998	45147	47405	49775
6	Հենակի շկիֆ՝ փոխարինում նորով	հատ	46000	48300	50715	53251	55913	58709
7	Դուռ բացող էլ. փականի փոխարինում նորով	հատ	35000	36750	38588	40517	42543	44670
8	Ջրի հեռացման էլ. փականի փոխարինում նորով	հատ	33800	35490	37265	39128	41084	43138
9	Ջրալցման էլ. փականի փոխարինում նորով	հատ	27000	28350	29768	31256	32819	34460
10	Ջրի էլ. տաքացուցիչի 5 կՎտ՝ փոխարինում նորով	հատ	24200	25410	26681	28015	29415	30886
11	Հենակի վերանորոգում և ներկում հակակոռոզիոն ներկով	հատ	50000	52500	55125	57881	60775	63814
12	Սալնիկ՝ փոխարինում նորով	հատ	4400	4620	4851	5094	5348	5616
13	Ղեկավարման վահանակ փոխարինում նորով	հատ	44800	47040	49392	51862	54455	57177
14	Ռեդուկտոր՝ վերանորոգում	հատ	35600	37380	39249	41211	43272	45436
15	Ռեդուկտոր՝ փոխարինում նորով	հատ	62500	65625	68906	72352	75969	79768
16	Փոկ՝ B-39 փոխարինում նորով	հատ	1200	1260	1323	1389	1459	1532
17	Փոկ՝ A-103 փոխարինում նորով	հատ	1200	1260	1323	1389	1459	1532
18	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 180310 ГОСТ 8882-75 50X110X27 մմ	հատ	7500	7875	8269	8682	9116	9572
19	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 180312 ГОСТ 8882-75 60X130X31 մմ	հատ	12300	12915	13561	14239	14951	15698
20	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 206 ГОСТ 8338-75 30X62X16 մմ	հատ	5400	5670	5954	6251	6564	6892
21	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 180206 ГОСТ 8882-75 30X62X20 մմ	հատ	1500	1575	1654	1736	1823	1914
22	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 7206 ГОСТ 333-79 32X62X16 մմ	հատ	1800	1890	1985	2084	2188	2297
23	Ռեդուկտորի շկիֆ՝ փոխարինում նորով	հատ	39500	41475	43549	45726	48012	50413
	Կենտրոնախույս՝ 25 կգ-ոց							
1	Միացնող կցորդիչ՝ /մուֆտ/ փոխարինումը նորով	հատ	10000	10500	11025	11576	12155	12763
2	Արգելակման մեխանիզմ /ժապավեն/՝ փոխարինումը նորով	հատ	3600	3780	3969	4167	4376	4595
3	Հենակի վերանորոգում և ներկում հակակոռոզիոն ներկով	հատ	40000	42000	44100	46305	48620	51051
4	Փոկ՝ B-2000 փոխարինում նորով	հատ	3500	3675	3859	4052	4254	4467
5	Փոկ՝ A-1600 փոխարինում նորով	հատ	5300	5565	5843	6135	6442	6764
6	Օդափոխիչ շարժիչով՝ 1.1 կՎտ վերանորոգում	հատ	30000	31500	33075	34729	36465	38288
7	Օդափոխիչ շարժիչով՝ 1.1 կՎտ փոխարինում նորով	հատ	42000	44100	46305	48620	51051	53604
8	Սալնիկ՝ փոխարինում նորով	հատ	4400	4620	4851	5094	5348	5616
9	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 180310 ГОСТ 8882-75 50X110X27 մմ	հատ	7500	7875	8269	8682	9116	9572
10	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 180312 ГОСТ 8882-75 60X130X31 մմ	հատ	12300	12915	13561	14239	14951	15698
11	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 206 ГОСТ 8338-75 30X62X16 մմ	հատ	5400	5670	5954	6251	6564	6892
12	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 180206 ГОСТ 8882-75 30X62X20 մմ	հատ	1500	1575	1654	1736	1823	1914
13	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 7206	հատ	1800	1890	1985	2084	2188	2297

	ГОСТ 333-79 32Х62Х16 մմ							
	Կենտրոնախույս՝ 50 կգ-ոց							
1	Միացնող կցորդիչ՝ /մուֆտ/ փոխարինումը նորով	հատ	15000	15750	16538	17364	18233	19144
2	Արգելակման մեխանիզմ /ժապավեն/՝ փոխարինումը նորով	հատ	10000	10500	11025	11576	12155	12763
3	Հենակի վերանորոգում և ներկում հակակոռոզիոն ներկով	հատ	50000	52500	55125	57881	60775	63814
4	Փոկ՝ Բ-2000 փոխարինում նորով	հատ	3500	3675	3859	4052	4254	4467
5	Փոկ՝ Բ-1950 փոխարինում նորով	հատ	2300	2415	2536	2663	2796	2935
6.	Փոկ՝ Բ-1900 փոխարինում նորով	հատ	2400	2520	2646	2778	2917	3063
7	Սալնիկ՝ փոխարինում նորով	հատ	4400	4620	4851	5094	5348	5616
8	Օդափոխիչ շարժիչով՝ 1.1 կՎտ վերանորոգում	հատ	30000	31500	33075	34729	36465	38288
9	Օդափոխիչ շարժիչով՝ 1.1 կՎտ փոխարինում նորով	հատ	42000	44100	46305	48620	51051	53604
10	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 180310 ГОСТ 8882-75 50Х110Х27 մմ	հատ	7500	7875	8269	8682	9116	9572
11	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 180312 ГОСТ 8882-75 60Х130Х31 մմ	հատ	12300	12915	13561	14239	14951	15698
12	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 206 ГОСТ 8338-75 30Х62Х16 մմ	հատ	5400	5670	5954	6251	6564	6892
13	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 180206 ГОСТ 8882-75 30Х62Х20 մմ	հատ	1500	1575	1654	1736	1823	1914
14	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 7206 ГОСТ 333-79 32Х62Х16 մմ	հատ	1800	1890	1985	2084	2188	2297
	Արդուկող պրես ԿՊ-115							
1.	Օդի բաժանարար՝ փոխարինում նորով	հատ	2300	2415	2536	2663	2796	2935
2	Բարձրացնող մխոց՝ փոխարինում նորով	հատ	3000	3150	3308	3473	3647	3829
3	Կարգավորիչ՝ փոխարինում նորով	հատ	2500	2625	2756	2894	3039	3191
4	Օդի կոմպրեսատոր՝ փոխարինում նորով	հատ	15000	15750	16538	17364	18233	19144
5	Ճնշման խողովակ՝ փոխարինում նորով	հատ	1400	1470	1544	1621	1702	1787
6.	Պրեսի ջերմակայուն պաստառ՝ /սուկնո/ փոխարինում նորով	գծ-մ	1000	1050	1103	1158	1216	1276
7	Հենակի մաքրում և ներկում՝ գորշ գույնով	մ.ք.	5000	5250	5513	5788	6078	6381
	Արդուկող գլան ԿՊ-412							
1	Ջերմակարգավորիչ՝ փոխարինում նորով	հատ	11800	12390	13010	13660	14343	15060
2	Ռեդուկտոր շարժիչով՝ վերանորոգում	հատ	66800	70140	73647	77329	81196	85256
3	Ռեդուկտոր շարժիչով՝ փոխարինում նորով	հատ	114000	119700	125685	131969	138568	145496
4	Փոխանցման ժապավեն՝ փոխարինում նորով	հատ	4400	4620	4851	5094	5348	5616
5	Օդափոխիչ շարժիչով՝ 0.18 կՎտ վերանորոգում	հատ	6900	7245	7607	7988	8387	8806
6.	Օդափոխիչ շարժիչով՝ 0.18 կՎտ փոխարինում նորով	հատ	11400	11970	12569	13197	13857	14550
7	Տաքացուցիչ՝ 2.0 կՎտ փոխարինում նորով	հատ	13200	13860	14553	15281	16045	16847
8	Բարձրացնող մեխանիզմ՝ փոխարինում նորով	հատ	59500	62475	65599	68879	72323	75939
9	Վերջնամաս՝ /կանցելիկ/ փոխարինում նորով	հատ	7400	7770	8159	8566	8995	9444
10	Փոխանցման գլան՝ փոխարինում նորով	հատ	18000	18900	19845	20837	21879	22973
11.	Ատամնանիվ միջանկյալ՝ փոխարինում նորով	հատ	17000	17850	18743	19680	20664	21697
12	Ատամնանիվ գլանի՝ փոխարինում նորով	հատ	25000	26250	27563	28941	30388	31907
13	Կարգավորիչ՝ փոխարինում նորով	հատ	29000	30450	31973	33571	35250	37012
14	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 180206 ГОСТ 8882-75 30Х62Х20 մմ	հատ	1500	1575	1654	1736	1823	1914
15	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 7206 ГОСТ 333-79 32Х62Х16 մմ	հատ	1800	1890	1985	2084	2188	2297
16	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 206 ГОСТ 8338-75 30Х62Х16 մմ	հատ	5400	5670	5954	6251	6564	6892
17	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 180310 ГОСТ 8882-75 50Х110Х27 մմ	հատ	7500	7875	8269	8682	9116	9572
18	Առանցքակալ՝ փոխարինում նորով N 180312 ГОСТ 8882-75 60Х130Х31 մմ	հատ	12300	12915	13561	14239	14951	15698
19	Գլանի ջերմակայուն պաստառ՝ /սուկնո/ փոխարինում նորով	գծ-մ	11000	11550	12128	12734	13371	14039
20	Հենակի մաքրում և ներկում՝ գորշ գույնով	մ.ք.	5000	5250	5513	5788	6078	6381
	Վերանորոգման նյութեր, որոնք կարող են օգտագործվել բոլոր սարքավորումների համար							
1	Էլ. մալուխ, փոխարինում նորով պղնձե, ՎՎԳ 4x1,5մմ²	մ	680	714	750	787	827	868
2	Էլ. մալուխ, փոխարինում նորով պղնձե, ՎՎԳ 4x2,5մմ²	մ	770	808	849	891	936	983
3	Էլ. մալուխ, փոխարինում նորով պղնձե, ՎՎԳ 4x4մմ²	մ	840	882	926	972	1021	1072

4	Էլ. մալուխ, փոխարինում նորով պղնձե, ՎՎԳ 4x6մմ²	մ	1090	1144	1202	1262	1325	1391
5	Էլ. մալուխ, փոխարինում նորով պղնձե, ՎՎԳ 4x10մմ²	մ	1340	1407	1477	1551	1629	1710
6	Էլ. մալուխ, փոխարինում նորով պղնձե, ՎՎԳ 4x16մմ²	մ	1500	1575	1654	1736	1823	1914
7	Էլ. մալուխ, փոխարինում նորով պղնձե, ՎՎԳ 4x35մմ²	մ	1950	2047	2150	2257	2370	2489
8	Էլ. ավտոմատ անջատիչ եռաֆազ 63 Ա՝ փոխարինում նորով	հատ	19000	19950	20948	21995	23095	24249
9	Էլ. ավտոմատ անջատիչ եռաֆազ 32-40 Ա՝ փոխարինում նորով	հատ	16000	16800	17640	18522	19448	20421
10	Էլ. ավտոմատ անջատիչ միաֆազ 40-63 Ա՝ փոխարինում նորով	հատ	6000	6300	6615	6946	7293	7658
11	Էլ. ավտոմատ անջատիչ եռաֆազ 6-25 Ա՝ փոխարինում նորով	հատ	9600	10080	10584	11113	11669	12252
12	Էլ. ավտոմատ անջատիչ միաֆազ 6-32 Ա՝ փոխարինում նորով	հատ	5000	5250	5513	5788	6078	6381
13	Էլ. մագնիսական թողարկիչ 16-40 Ա՝ փոխարինում նորով	հատ	13000	13650	14333	15049	15802	16592
14	Էլ. շարժիչի փոխարինում նորով 0.18 կՎտ	հատ	9500	9975	10474	10997	11547	12125
15	Էլ. շարժիչի փոխարինում նորով 0.27 կՎտ	հատ	9500	9975	10474	10997	11547	12125
16	Էլ. շարժիչի փոխարինում նորով 0.37 կՎտ	հատ	10800	11340	11907	12502	13127	13784
17	Էլ. շարժիչի փոխարինում նորով 0.6 կՎտ	հատ	20000	21000	22050	23153	24310	25526
18	Էլ. շարժիչի փոխարինում նորով 0.75 կՎտ	հատ	20000	21000	22050	23153	24310	25526
19	Էլ. շարժիչի փոխարինում նորով 1.0 կՎտ	հատ	35000	36750	38588	40517	42543	44670
20	Էլ. շարժիչի փոխարինում նորով 1.5 կՎտ	հատ	42000	44100	46305	48620	51051	53604
21	Էլ. շարժիչի փոխարինում նորով 1.7 կՎտ	հատ	42000	44100	46305	48620	51051	53604
22	Էլ. շարժիչի փոխարինում նորով 2.2 կՎտ	հատ	57000	59850	62843	65985	69284	72748
23	Էլ. շարժիչի փոխարինում նորով 2.8 կՎտ	հատ	84000	88200	92610	97241	102103	107208
24	Էլ. շարժիչի փոխարինում նորով 3.0 կՎտ	հատ	84000	88200	92610	97241	102103	107208
25	Էլ. շարժիչի վերանորոգում 0.18 կՎտ	հատ	5750	6037	6339	6656	6989	7339
26	Էլ. շարժիչի վերանորոգում 0.27 կՎտ	հատ	5750	6037	6339	6656	6989	7339
27	Էլ. շարժիչի վերանորոգում 0.37 կՎտ	հատ	8510	8935	9382	9851	10344	10861
28	Էլ. շարժիչի վերանորոգում 0.6 կՎտ	հատ	12650	13282	13947	14644	15376	16145
29	Էլ. շարժիչի վերանորոգում 0.75 կՎտ	հատ	12650	13282	13947	14644	15376	16145
30	Էլ. շարժիչի վերանորոգում 1.0 կՎտ	հատ	25641	26923	28269	29683	31167	32725
31	Էլ. շարժիչի վերանորոգում 1.5 կՎտ	հատ	37820	39711	41697	43781	45970	48269
32	Էլ. շարժիչի վերանորոգում 1.7 կՎտ	հատ	37820	39711	41697	43781	45970	48269
33	Էլ. շարժիչի վերանորոգում 2.2 կՎտ	հատ	45299	47563	49942	52439	55061	57814
34	Էլ. շարժիչի վերանորոգում 2.8 կՎտ	հատ	61238	64300	67515	70891	74435	78157
35	Էլ. շարժիչի վերանորոգում 3.0 կՎտ	հատ	61238	64300	67515	70891	74435	78157

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-7/16-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման ենթակա ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2019թ. պետական բյուջեից ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2019թ. ընդ որում՝				
		օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	լվացքատների շահագործման ծառայություններ /Լվացքատան սարքավորումների վերանորոգում/	2200000	3300000	4800000	6300000	7000000

Նշանակություն՝ CPV կոդը՝ 98311120/2:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. Ղամբարյան

ԿԱՏԱՐՈՂ

«Տեխնոֆրիզ» ՍՊԸ
Տնօրեն

Վ. Հարությունյան

Հավելված N 3
N ԳՀԾՁԲ-7/16-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԾՁԲ-7/16-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____ -ի
Պատվիրատուի անվանումը Կատարողի անվանումը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն